ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

06.02.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ1

2020թվականի փետրվարի 06-ին,ժամը 14:00-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ՝ Գ. Գևորգյանը, համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու անդամների:

Նախագահությամբ՝ Ա.Ավետիսյանի

Քարտուղարությամբ՝ Ն. Թաքիրյանի

Օրակարգում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքապետարանի 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն.

Զեկուցեց Ա.Ավետիսյանը:

Նա ներկայացրեց Նոր Արմավիր համայնքապետարանի կողմից 2019թվականի ընթացքում տարբեր ոլորտներում կատարված աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի համայնքապետարանի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը համապատասխանում է կատարած աշխատանքին և գնահատվում է դրական:

2.Հաստատել Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի ղեկավարի 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ՝Գ. Գևորգյանը, համայնքի ավագանու անդամներից ,դպրոցի ուսուցիչներից և 45 համայնքի բնակիչներից

2020 թվականի փետրվարի 06-ին ժամը 14:00-ին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի ղեկավարը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով <<Տեղական ինքնակառավարման մասին>>, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, ՀՀ օրենքով <<համայնքի ղեկավարի աշխատակազմի >> ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2019թվականի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար աջակցել են Արմավիրի մարզպետը, մարզպետարանի աշխատակազմը, համայնքի ավագանին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ մթերքների իրացմանը:

Համայնքի ղեկավարը օգնություն է ցուցաբերում գյուղում մահացած և ծնված անձանց ընտանիքներին,ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության մեկնող և եկող զինվորականներին:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի պատշաճ մատակարարման հետ, ինչպես նաև կազմակերպում է գարնանացանի , աշնանացանի աշխատանքներ և հացահատիկի բերքահավաք:

Համայնքն ունի իր առանձնահատկությունները:

Բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և անասնաբուծությամբ: Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքներ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր տեսակի հակահամաճարակային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարարական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունության վրա: Ներկայումս համայնքում գործում է 4 առևտրի կենտրոն և 1 գազալցակայան:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման , ինչպես նաև ապօրինի ընդերքօգտագործման վրա: Սիստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումը՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում: Բնակիչներին տեղեկացվում և ծանուցվում է <<Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքի պահանջները:Համայնքում կատարվել է հողալցման և ավազապատման,ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ,սիստեմատիկաբար կատարվում է հողալցումներ ներհամայնքային ճանապարհներում:Իրականացվել է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ,որպես պետության պատվիրակած լիազորություն կազմվել է հողային հաշվեկշիռը և ներկայացվել ավագանու հաստատմանը,իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամսերի ընթացիկ հաշվառումը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել է ճշտված իրավիճակային հատակագծեր:

Հունիս ամսից սկսվեցին ասֆալտապատման լայնածավալ աշխատանքներ:Համայնքի ղեկավարի անմիջական հետևողականությամբ նախագիծ-նախահաշվի մեջ կատարվեցին մի շարք փոփոխություններ՝ի օգուտ համայնքի հարմարավետության և ավելի երկար շահագործման:Այն է ՝համայնքի հողատարածքների մուտքերում և իջատեղերում նախատեսված խողովակները տեղափոխվել են ճանապարհի հարակից հատվածներում գոյություն ունեցող ոռոգման առուներ,կանգառների տեղադիրքերը նախատեսվել են ճանապարհի ձախ հատվածներում,նախագծով նախատեսված 54մ երկարությամբ բազրիքները տեղափոխվել են մանկապարտեզի հարակից տարածք,ավելի անվտանգ երթևկություն ապահովելու համար:

Սիստեմատիկաբար կատարվում է աղբահանություն/շաբաթական 2 անգամ/:

Համայնքում հուլիս ամսից այն փողոցները, որոնք չունեին ջրամատակարարում, կատարվել է ջրամատակարարման աշխատանքներ,կենտրոնական փողոցում,մինչ ասֆալտապատման աշխատանքները սկսելը,փոխվել են ամբողջ ջրամատակարարման համակարգերը և տեղադրվել են նոր ջրագծեր,ինչպես նաև կատարվել են ջրագծերի մաքրման աշխատանքներ:2019թվականի փետրվար ամսից վերսկսվել է << Նոր Արմավիր մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի 2-րդ խմբի համար նախատեսված խմբասենյակի վերանորոգման աշխատանքները:Աշխատանքը կատարվել է մասնավորի

կողմից՝համայնքի բնակիչ Ա.Սարգսյանի կողմից,ում հետ պայմանագիր է կնքվել և վճարվել է մոտ 300.000 հազար ՀՀ դրամ:Մանկապարտեզի բացվելուց հետո աշխատանքները դադարեցվել են և միայն փակվելուց հետո սկսվել է 2-րդ խմբի համար նախատեսված 2-րդ սենյակի վերանորոգման աշխատանքները:<<Հայրենիք Միության>> կողմից տրամադրվել է շինարարական նյութեր,իսկ աշխատուժը տրամադրվել է համայնքի կողմից,որի վարձատրությունը,որպես բարեգործություն , կատարել է համայնքի բնակիչ Դավել Ղանդիլայնի կողմից,աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:Տեղադրվել է նաև արևային էներգիայի համակարգ:Կատարվել է ներհամայնքային ճանապարհի լուսավորություն և ավազապատում:Քանի որ, ներհամայնքային ճանապարհները գտնվում է շատ վատ վիճակում սիստեմատաբար կատարվում է հողալցումներ և ավազապատում: Հողալցումներ կատարվում է նաև դաշտամիջյան ճանապարհներին:Փոխվել են կենտրոնական ճանապարհի 24 հենասյուներն ամբողջությամբ,պարբերաբար կատարվում է լուսավորության էլեկտրալամպերի փոփոխման աշխատանքներ:Ինչպես նաև համայնքի 3-րդ և 23-րդ փողոցներում անցկացվել է լուսավորություն:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է միջնակարգ դպրոց:Աշակերտների թվը՝ 185:
Աշխատողների թիվը 36-ը ուսուցիչներ՝ 24 :Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է միջին մակարդակի վրա:
Կազմակերպվել է մի շարք միջոցառումներ՝

2019թվականի մարտի 8-ին Նոր Արմավիրի համայնքապետարանում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված կանանց միջազգային օրվան:Վերջին զանգի առիթով բոլոր շրջանավարտներին /10 աշակերտ և 1 դասղեկ/ավազանու որոշմամբ տրամադրվել է 20.000 ՀՀ դրամ:Հունիսի 1-ին՝ երեխաների օրվա առթիվ, համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ միջոցառում և հյուրասիրություն համայնքապետարանի կողմից:
2019թվականի մայիսի 15-ից վերաբացվեց <<Նոր Արմավիր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-Ը՝ արդեն 2 խմբի համար,թվով 60 երեխա:Մանկապարտեզ հաճախող երեխաների համար համայնքապետարանի շենքում կազմակերպվել է տիկնիկային ներկայացումներ:
Համայնքապետարանի շենքում գործում է պարի խմբակներ,որտեղ հաճախող երեխաները մասնակցել են բազմաթիվ մրցույթների և ստացել են մրցանակներ,գրավել են 1-ին տեղ:Դպրոցի 1-ին դասարան հաճախող երեխաներին/23 աշակերտ և 1 դասվար/ յուրաքանչյուրին տրամադրել է 10.000 /տասը հազար/ՀՀ դրամ,7-րդ դասարանցիների հեռավոր էքսկուրսիայի համար եղել է աջակցություն 45.000 ՀՀ դրամ՝ որպես տրանսպորտի ծախս:Դեկտեմբերի 29-ին համայնքապետարանի դահլիճում տեղի ունեցավ ամանորյա միջոցառում և 300 երեխաների բաժանվեցին ամանորյա նվերներ:
Ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը:
Ուշադրություն է դարձվում նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող այդ թվում ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների ապահովումը:
Ուշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2019թ. բյուջ. Հաստատված տարեկան պլան հազար դրամ	2019թ. պլան հազար դրամ	2019թ. փաստացին հազար դրամ	
Վարչական բյուջեն ընդամենը	48625.9	20770.0	19839.1	
Հողի հարկ	9000.0	3000.0	3018.5	
Գույքահարկ	5200.0	1500.0	1724.6	
Տեղական տուրք	396.0	100.0	100.0	
Հողի Վարձավճար	420.0	50.0	0	
Գույքահարկ 2 ի ն ություն	570.0	200.0	216.3	
դոտացիա	29239.9	14620.0	14620.0	
Այլ աղբյուրներից տրանսֆերտ	200.0	40.0	0	
Ֆոնդ բյուջ ընդամենը	4900.0	2500.0	167.7	
Վարչակ. Բյուջ. Կատ. հատկացում	4900.0	2500.0	167.7	
Տարեսկզբի ազատ մնացորդ	30.3	30.3	30.3	

2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	Տարեկան պլան հաստատված հազար դրամ	1-ին կիսամյակ պլան հազար դրամ	1-ին կիսամյակի փաստացին Հազար դրամ	
Վարչ. Բյուջ ընդամենը	48656.1	-	18789.0	
Տեղական ինքնակառ.	24600.0	-	10184.2	
Սոց օգնություն	3300.0	-	2412.0	
մշակույթ	2300.0	-	1001.1	
աղբաթափություն	1000.0	-	650.0	
Ջրամատակարարում	7100.0	-	3586.8	
Պահուստային ֆոնդ	4900.0	-	167.7	
Ֆոնդային բյուջե ընդ.	4900.0	-	198.0	
Կապիտալ նորոգում	1500.0	-	722.5	

ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՍՕՐՎԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1.ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:
2.ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:
3.ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՇԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:
4.ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:
5.ՄԱՄՆԱԿԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ:
6.ԿԱՆԳԱՌՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ:

Համայնքի ղեկավար՝ Լ.Ամալետիսյան